ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. մայիսի 25–28–ը Ղազախստանի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Վահան Քերոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   ք. Նուր–Սուլթան (Ղազախստանի Հանրապետություն, ս.թ. մայիսի 25–28–ը)

4. **Հրավիրող կողմը՝**
   Ղազախստանի Հանրապետության առևտրի և ինտեգրման նախարարություն:
   Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ղազախական միջկառավարական համատեղ հանձնաժողովի ղազախական կողմի համանախագահ՝ ՂՀ առևտրի և ինտեգրման նախարար Բախիթ Սուլթանով:

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն տնտեսական համագործակցության հարցերով հայ-ղազախական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 8–րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները՝**
   Նիստի ընթացքում քննարկվել են երկու երկրների առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մասնավորապես՝ փոխադարձ առևտրի ծավալների աելացման, արդյունաբերության և արդյունաբերական կոոպերացիայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, գիտատեխնիկական, բարձր տեխնոլոգիաների, նորարարության և թվայնացման, էներգետիկայի, մշակույթի, կրթության, սպորտի և առողջապահության ոլորտներում համագործակցության զարգացման հնարավորությունները: Նիստի ժամանակ անդրադարձ է կատարվել նաև միջտարածաշրջանային փոխգործակցության զարգացման, իրավապայմանագրային բազայի ընդլայնման, միջազգային կազմակերպություններում համագործակցության, երկու երկրների հատուկ (ազատ) տնտեսական գոտիներում ընկերությունների և տնտեսության տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերում ներդրումների ներգրավման հարցերին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի ընթացքում կայացել է հանդիպում Ղազախստանի Հանրապետության փոխվարչապետ Ռ. Սկլյառի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանից դեպի Ղազախստան ուղիղ ավիաչվերթների վերաբացման հեռանկարները, ինչը կնպաստի թէ՝ գործարարների փոխայցելությունների և գործարար կապերի, և թէ՝ զբոսաշրջային հոսքերի ավելացմանը: Երկու երկրների ապրանքաշրջանառության ծավալների ավելացման նպատակով, քննարկվել է ՌԴ Աստրախան քաղաքի տարածքում համատեղ լոգիստիկ կենտրոն հիմնելու հարավորությունը, ինչը կնպաստի ՀՀ և ՂՀ միջև ապրանքների մուլտիմոդալ տեղափոխմանը՝ կրճատելով ժամանակը և ծախսերը: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ դիմել Ղազախստանի ավիացիոն իշխանություններին՝ դիտարկել Երևան-Նուր-Սուլթան և Երևան-Ալմա-Աթա ուղիղ ավիաչվերթների բացման հնարավորությունը:

Ղազախստանի Հանրապետության առևտրի և ինտեգրման նախարար Բ. Սուլթանովի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը: Հատուկ ուշադրություն է դարձվել երկու երկրներում արտահանման ֆինանսական աջակցության գործիքակազմի կիրառման ընդլայնմանը, համատեղ լոգիստիկ կենտրոնի ստեղծմանը, կորոնավիրուսի պայմաններում էլեկտրոնային առևտրի ընդլայնմանը, զբոսաշրջային հոսքերի ավելացման և գործարար կապերի դյուրացման նպատակով երկու երկրների քաղաքացիների ներքին անձնագրերով փոխայցելությունների հնարավորությանը, ինչպես նաև Երևան-Նուր-Սուլթան և Երևան-Ալմա-Աթա ուղիղ ավիաչվերթների իրականացման անհրաժեշտությանը:

Ղազախստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ս. Օմարովի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության ոլորտին առնչվող հարցեր, այդ թվում՝ ինտենսիվ այգեգործության, խոզաբուծության, կաթիլային որոգման համակարգերի ներդրման, գյուղական նշանակության հողերի ավելի արդյունավետ օգտագործման, գինեգործության, մասնագետների վերապատրաստմանն առնչվող հարցերը: Առաջարկվել է ստորագրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՂՀ գյուղատնտեսության նախարարության միջև փոխըմբռնման հուշագիր:

«Կազախինվեստ» ազգային ընկերության նախագահ Մ. Յուսուպովի հետ հանդիպման ընթացքում քննարվել են երկու երկրներում ներդրումների ներգրավման հետ առնչվող գործառույթները, արտերկրում նշված կառույցների ներկայացուցիչների աշխատանքների յուրահատկությունները և դրանց արդյունավետության գնահատման համակարգերը: Համագործակցության ակտիվացման և հաջողված փորձի փոխանակման նպատակով՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ուղիղ կապ հաստատել «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամի և «Կազախինվեստ» ազգային ընկերության միջև:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի ընթացքում ստորագրվել է տնտեսական համագործակցության հարցերով հայ-ղազախական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 8-րդ նիստի արձանագրությունը և ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

01.06.2021